

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ն ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍՏՅԻՆ ԲՈՒԺՔՐՈՋ, ԹԱՂԱՄԱՍՏՅԻՆ ԹԵՐԱՊԵՒՏԻԿ ԲՈՒԺՔՐՈՋ ԵՎ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏԻ ԲՈՒԺՔՐՈՋ (1-ԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ Մրցույթին մասնակցելու համար անձը աշխատանքային խմբին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի խմբի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է,
2. Փաստաթուղթ՝ պետական նմուշի դիպլոմ միջնակարգ մասնագիտական կրթության մասին,
3. Անձնագրի պատճենը, հանրային ծառայության համարանիշը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում,

6. Մեկ լուսանկար 3X4 չափի:

Պարտադիր պայմաններ են՝

- Միջին մասնագիտական կրթության առկայություն,
- Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Լրացուցիչ պայմաններ են՝

- Համակարգչով աշխատելու ունակություն,
- Վերջին 5 տարում մասնագիտական աշխատանքի կամ վերապատրաստման առկայություն,
- Տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ՝ անձամբ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2019 թ. հոկտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքում՝ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սայաթ-Նովայի 20 հասցեում:

Մրցույթները տեղի կունենան 2019 թ. հոկտեմբերի 9-ին՝ ժամը 15-ին, Լոռու մարզի՝ Ալավերդու բժշկական կենտրոն՝ ՓԲԸ-ի շենքում: Հեռ.՝ (0253) 2-33-12:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ